ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՂԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.**Անունը, ազգանունը**.

Գեղամ Վարդանյան:

2.**Զբաղեցրած պաշտոնը**.

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3.**Գործուղման վայրը և ժամկետները**.

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2019թ. օգոստոսի 29-31-ը:

4.**Հրավիրող կողմը.**

Միավորված ավիաշինարարական կորպորացիա:

5.**Գործուղման նպատակը.**

Մասնակցություն Միջազգային ավիացիոն-տիեզերական սրահ (ՄԱԿՍ 2019) միջոցառմանը՝ տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում հայ-ռուսական համագործակցությունն ընդլայնելու հնարավորություններն ու ուղիները քննարկելու նպատակով:

6.**Քննարկված թեմաները.**

2019թ. օգոստոսի 27-ից սեպտեմբերի 1-ը ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած <<MAKC 2019 միջազգային ավիացիոն և տիեզերական սրահներ>> միջազգային ավիացիոն և տիեզերական ցուցահանդես-գիտաժողովին և դրա շրջանակներում կայանալիք հանդիպումներին քննարկվել են տեխնոլոգիական արդյունաբերությանը և ռազմարդյունաբերությանը վերաբերող կետեր: Մի շարք հեղինակավոր ընկերությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են նշված ոլորտներում

հնարավոր համագործակցության եզրերը և փորձի ու գիտելիքների փոխանակման հնարավորությունները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

<<MAKC 2019>> ցուցահանդես-գիտաժողովի շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանը և Ռազմարդյունաբերության կոմիտեի նախագահ Ավետիք Քերոբյանը հանդիպում ունեցան մի շարք հեղինակավոր և մեծ փորձառություն ունեցող կազմակերպությունների հետ: Հանդիպումների ընթացքում կողմերը քննարկեցին երկուստեք կարևորություն ունեցող հարցեր: Գեղամ Վարդանյանը ներկայացրեց Հայաստանի, և մասնավորապես՝ ավիացիայի ինժեներական նախագծման և հաշվարկման ուղղությամբ առկա ներուժը, որը կարելի է օգտագործել՝ արդյունաբերական արտադրություն ներդնելու և զարգացնելու համար: Ռուսական կողմի ներկայացուցիչները խոստացան քննարկել և ներկայացնել առաջարկներ, թե ինչ ձևաչափով են պատկերացնում հնարավոր համագործակցության շրջանակը՝ Հայաստանում գործող ոլորտային կազմակերպություններ և առանձին գիտատեխնիկական ձեռնարկությունների հետ համագործակցելու վերաբերյալ:

Կազմակերպությունների ներկայացուցիչները հայտնեցին իրենց պատրաստակամությունը՝ Հայաստանում ներդրումային ծրագրեր իրականացնելու և ավիացիոն շարժիչներ արտադրող գործարան հիմնելու մասին, և նախատեսվում է, որ ստացված արտադրանքի սպառման շուկայի պահանջները կարելի է ապահովել ոչ միայն Ռուսաստանի Դաշնությունում, այլ նաև Եվրոպայում և Ասիայում: Հայկական կողմի ներկայացուցիչները փաստեցին, որ կօժանդակեն նմանօրինակ յուրաքանչյուր նախաձեռնության և կնպաստեն ծրագրի՝ Հայաստանում արագ ներդրմանը և իրականացմանը:

Հանդպումների ընթացքում Գ. Վարդանյանը ներկայացրել է հայկական ինժեներական և գիտատեխնիկական կազմակերպությունների ներուժը, մասնավորապես՝ կապի ոլորտում, ինչը մեծ հետաքրքրություն առաջացրեց հանդիպումների մասնակիցների մոտ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նյութերի տրամադրման և հետագա քայլերի պարզորոշման վերաբերյալ: Ընկերությունների պատվիրակություններին ներկայացվեցին տարբեր տեխնիկական բնագավառներում Հայաստանի հնարավորությունները, երկրում առկա շափյուղաների աճեցման հնարավորությունը, և առաջացած հետաքրքրության արդյունքում

պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակել քննարկումները՝ հստակ համագործակցության ուղղություններ գտնելու նպատակով:

8.**Ակնկալվող արդյունքները.**

Այցի շրջանակներում հնարավոր եղավ գործընկերներին առավել հանգամանալիորեն ներկայացնել Հայաստանում առկա գիտական և մարդկային ներուժը: Հայկական պատվիրակության ներկայացուցիչները ձեռք բերեցին անհրաժեշտ պայմանավորվածություններ և համագործակցության ուղենիշներ՝ վերոնշյալ ուղղություններով հնարավոր համագործակցության համար ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացմանը մոտ ժամանակներում ընթացք տալու նպատակով:

9.**Ստորագրությունը, ամսաթիվը.**

Գեղամ Վարդանյան **04.09.2019թ.**